«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2023

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ Սովորողների ինքնուրույնության նախաձեռնության եվ ստեղծագործական ունակությունների զարգացումը առարկայի դասավանդման ընթացքում

ԱՌԱՐԿԱ **Շախմատ**

ՀԵՂԻՆԱԿ **Անահիտ Ոսկանյան**

ՄԱՐԶ **Երևան**

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ Հ. 174 հիմնական դպրոց

Բովանդակություն

Ներածություն_____ 3

Տարրական դպրոցում «Շախմատ» ուսումնական առարկայի դասավանդման գործընթաց իառանձնահատկությունները_____4

ԳԼՈՒԽ 2 ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ Մաս_____8

Եզրակացություն_____16

Օգտգործված գրականության ցանկ_____ 17

Commented [U1]: չկա տեղեկություն ով ինչպես երբ ում հետ, մեթոդը պարզ չէ, խումբը, քանի հոգի և այլն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Մեր երկրի զարգացման ներկա փուլում կրթության որակի բարձրացումը շարունակում է մնալ պետության գերակա խնդիրներից մեկը: Հանրակրթության ժամանակակից խնդիրների մեջ կարևորում են անհատի անձնային որակների ձևավորումը, ստեղծագործական ունակությունների, քննադատական մտածողության, նախաձեռնողականության, վերլուծելու, համադրելու, վերացարկելու կարողությունների զարգացումը: Այս իմաստով շախմատային խաղը տալիս է անձի մտավոր, հոգեբանական զարգացման հիանալի հնարավորություն: Պատահական չէ, որ ՀՀ կրթության նոր չափորոշչի պահանջի համաձայն Հայաստանի Հանրապետությունն անցնում է կարողունակությունների վրա հիմնված ուսուցման:

Հայաստանի Հանրապետությունում 2011 թվականից սկսած «Շախմատը» դարձել է պարտադիր ուսումնական առարկա և դասավանդվում է հանրակրթական բոլոր

դպրոցների տարրական դասարաններում: «Շախմատ» առարկայի մուտքը երկրորդից չորրորդ դասարաններ ակնհայտ փոփոխություններ մտցրեց սովորողների կյանքում:: Դպրոցական դասընթաց «Շախմատի» մուտքը նպաստեց ճանաչելու շախմատային խաղի ներուժը՝ որպես խաղացողների մտավոր և անձնային զարգացման միջոց: Շախմատ խաղալով՝ կրտսեր դպրոցականն ամենից առաջ սովորում է ինքնուրույն մտածել և որոշումներ կայացնել: Նույնիսկ ամենապարզ լուծումները աշակերտին սովորեցնում են պատասխանատու լինել, հաշվի առնել ուրիշի տեսակետը, կանխատեսել նրա վարքը և դրանց հիման վրա կառուցելսեփական դրսևորումները [2, էջ 127]:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ Սովորողների ինքնուրույնության հիմնախնդրի առանձնահատկությունների բացահայտումն ու արդյունավետ ուղիների առաջադրումն է շախմատ առարկայի միջոցով:

Commented [U2]: Շատ ընդհանուր է, թեմային չի մոտենում

Commented [U3R2]:

Commented [U4R2]:

Commented [U5]: Փաստորեն թեմայի կարևորությունը չի հիմնավորված

Commented [U6]: Սա նույնպես

1.1. Տարրական դպրոցում «Շախմատ» ուսումնական առարկայի դասավանդման գործընթացի առանձնահատկությունները

Հայտնի է, որ ՀՀ-ում «Շախմատը» որպես ուսումնական առարկա ընդգրկված է հանրակրթական տարրական դասարանների ուսումնական պլանում: Հետազոտողները նշում են շախմատի դասի ազդեցությունը սովորողների արտաքին և ներքին խոսքի, տրամաբանական մտածողության, կամքի, կյանքի ակտիվության, ճանաչողական պահանջմունքների, քննադատության, ինքնագնահատականի և ինքնավերլուծության, ինքնակրթության, կայունության, մտածողության ինքնուրույնության, գեղագիտական ճաշակի դրսևորման վրա: Ընդգրկելով գիտելիքի լայն շրջանակ «Շախմատ» առարկայի դասն առավելագույնս նպաստում է անձի մտավոր զարգացմանը: Շախմատի դասերի միջոցով կարելի է մոտենալ նոր տիպի անհատի ձևավորման, բազմակողմանի Ուսուցման մեթոդիկայի պահանջները միտված են ոչ միայն շախմատ խաղում կրտսեր դպրոցականների հիշողության զարգացմանը, ուշադրության ձևավորմանը, այլև սովորողի ընդհանուր հոգեբանական, մտավոր, բարոյական և ֆիզիկական զարգացմանը: Շախմատը զարգացնում է հիշողությունը, թույլ տալիս ավելի հեշտ ընկալել նաև դպրոցական այլ առարկաները»: Շախմատի դասերի ժամանակ մեծ ուշադրություն է հատկացվում խաղաքարերի դիրքերի վերաբերյալ շախմատային խնդիրների լուծմանը:

Շախմատի դասերի ժամանակ աշակերտները ձևավորվում են որպես մարտիկ՝ հաղթողի հոգեբանությամբ, քանի որ շախմատի էությունն է հաղթել՝ հայտարարել «մատ»: Սա այն կարևորագույն հատկանիշներից մեկն է, որով պարտական ենք շախմատի դասերին: Շախմատի դասերին հատուկ տեղ է հատկացվում շախմատ խաղի ռազմավարությանը, որը հետագայում դառնում է կյանքի ռազմավարություն: Կյանքը մշտապես ստիպում է մեզ անել այս կամ այն ընտրությունը: Շատ հազվադեպ է լինում, որ կյանքի որոշակի իրավիճակում կա միայն մեկ լուծում: Ամեն անգամ «կողմ» և «դեմ»

Commented [U7]: Կիսատ է

Commented [U8]: /

Ջուր է

հանգամանքները կշռելու հնարավորությունը թերևս ամենակարևորն է և օգտակարը, ինչ սովորեցնում է շախմատը:

Commented [U9]: նույնը

Տարրական դպրոցում դասավանդվող «Շախմատ» առարկայի դասի ժամանակ իրականացվում են մի քանի գործառույթներ.

Ճանաչողական - Շախմատ խաղալիս երեխան սովորում է տրամաբանորեն մտածել, հաշվարկել գործողությունները, կանխատեսել մրցակցի արձագանքը համեմատել, սովորում է շատ նոր և հետաքրքիր բաներ: Խաղը նպաստում է երևակայության, ստեղծագործական ունակությունների զարգացմանը:

Դաստիարակչական - Շատ երեխաներ չեն կարող նստել մեկ տեղում և կենտրոնանալ դասերի վրա: Շախմատը սովորեցնում է համբերություն, հավաքվածություն, ուշադրություն: Կրտսեր դպրոցականները սովորում ենինքնուրույն, մտածված որոշումներ կայացնել և ավելի հանգիստ վերաբերվել անհաջողություններին:

Ֆիզիկական - Խաղատախտակի առաջ երկար նստելը երեխայի համար դժվար է: Պետք է ունենալ մեծ ուժ և տոկունություն: Այդ պատճառով պետք է անընդհատ անցկացնել ֆիզկուլտ դադարներ և բոլոր երեխաներն այցելում են կամ լողավազան, կամ որևէ այլ սպորտային խմբակ:

Շախմատ խաղալու կարողության զարգացման ծրագրի նպատակը աշակերտների անհատական և ինտելեկտուալ զարգացման, մշակույթի ձևավորման և բովանդակալից ժամանցի կազմակերպման համար պայմանների ստեղծումն է շախմատի դասերի միջոցով: Շախմատի դասերն իրականացվում են հետևյալ մեթոդական սկզբունքների հիման վրա.

- Զարգացնող գործունեության սկզբունք - խաղ ոչ թե հանուն խաղի, այլ ամբողջ կոլեկտիվի և յուրաքանչյուր մասնակցի անձի զարգացման նպատակով,
- Ակտիվ ներգրավվածության սկզբունք - Յուրաքանչյուր երեխայի ակտիվ ներգրավվածություն խաղային գործունեության մեջ, այլ ոչ թե պասիվ դիտում,
- Մատչելիության, հաջորդականության և համակարգվածության սկզբունք – Երեխայի համար շախմատի դասընթացի ծրագրային նյութի մատչելիություն, հաջորդականություն և համակարգվածություն,

- Հոգեբանական հարմարավետության սկզբունք - կրթական միջավայրի ստեղծում, որն ապահովում է ուսումնական գործընթացի բոլոր սթրեսաստեղծ գործոնների վերացումը,
- Մինիմաքսի սկզբունք - յուրաքանչյուր երեխայի համար իր տեմպերով առաջխաղացման հնարավորության ապահովում,
- Աշխարհի մասին ամբողջական պատկերացումների սկզբունք - նոր գիտելիքների ներդրման ժամանակ բացահայտվում է նրա հարաբերությունները շրջապատող աշխարհի առարկաների և երևույթների հետ,
- Փոփոխման տարբերակներ ունենալու սկզբունք - երեխաների մոտ ձևավորվում է սեփական ընտրություն իրականացնելու ունակություն և նրանց պարբերաբար տրվում է ընտրության հնարավորություն,
- Ստեղծագործականության սկզբունք - ուսուցման գործընթացն ուղղված է երեխաների ստեղծագործական գործունեության սեփական փորձի, մոտեցման ձեռքբերմանը [31, էջ 280]:

Վերոնշյալ սկզբունքներն ինտեգրում են զարգացնող ուսուցման կազմակերպման հիմունքների վերաբերյալ ժամանակակից գիտական հայացքները և ապահովում մտավոր և անձնային զարգացման խնդիրների լուծումը: Սովորողների կայուն հետաքրքրությունը՝ շախմատով զբաղվելու, ներքին գործողությունների ծրագիր կառուցելու գործընթացների նկատմամբ, զարգացնում է նպատակասլացություն, նպատակին հասնելու հաստատակամություն, սովորեցնում ինքնուրույն որոշումներ կայացնել և պատասխանատվություն կրել դրանց համար [21, էջ 186]: Աշակերտի վարպետությունը կատարելագործելու, տակտիկական հարվածներ նախատեսող դիրքերն ինքնուրույն ձևավորելու, հստակ քայլերից հետո՝ «մատային» և այլ, փուլերում

Շախմատային պարտիաների վերլուծությունը, ստեղծագործական իմաստավորումն աշակերտին օգնում է զարգացնելու խաղի նկատմամբ իր սեփական մոտեցումը: Այս մեթոդի կիրառումը նախատեսում է ամենատարբեր խնդիրների լուծման համար առաջին հերթին երեխաների ինքնուրույնության ապահովումը:

մեթոդի կիրառումը նախատեսում է ամենատարբեր խնդիրների լուծման համար առաջին հերթին երեխաների ինքնուրույնության ապահովումը:

Բացի այդ, սովորողներին առաջարկվում են ինքնուրույն ուսուցման թեմաներ՝ «Թագուհին ընդդեմ զինվորի», «Թագուհին ընդդեմ թագավորի» և այլն, հետաքրքիր պատմություններ շախմատի պատմությունից, ստացված գիտելիքները ստուգելու համար թեստեր և այլն: Շախմատի դասի ընթացքում ձևավորվում են սովորողների հետևյալ կարողությունները.

1. Կենտրոնացում - Երեխաներն ընկալում են կենտրոնանալու և ուշադիր լսելու առավելությունները և համոզվում, որ եթե նրանք ուշադիր չեն, թե ինչ է կատարվում, չեն կարող դրան արձագանքել, որքան էլ որ խելացի լինեն:
2. Պատկերացում - Սովորեցնելով խաղաքարերը մտքով տեղափոխել նախ մեկ, այնուհետև մի քանի քայլ առաջ, ամրապնդվում է աշակերտների պատկերացնելու ունակությունը, երեխաներին առաջարկում են պատկերացնել գործողությունների հաջորդականությունը նախքան այն տեղի կունենա:
3. Առաջինը մտածել - Երեխաներին սովորեցնում են նախ մտածել, հետո գործել. «Եթե դա անեմ, ի՞նչ կարող է պատահել, և ինչպե՞ս կարող եմ ես պատասխանել»:

Այսպիսով, ռազմավարական մտածողությունը, որը ձևավորվում է շախմատի դասի ընթացքում, տրամաբանող մարդու գլխավոր որակն է: Հատկապես կրտսեր դպրոցական տարիքում ռազմավարական մտածողության զարգացումը հնարավոր է խաղերի և վարժությունների միջոցով: Շախմատի դասերը կդառնան ավելի արդյունավետ, եթե ուսուցիչները իրենք սովորեն և երեխաներին սովորեցնեն տեսնել խորը և ոչ մակերեսային կապ շախմատի և կյանքի միջև: Ուսումնական ընդհանրական գործողությունների ձևավորումը' այսինքն սովորելու, ուսումնական նյութի վրա աշխատելու, ինքնազարգացման, ինքնակատարելագործման ունակությունը դիտվում է որպես շախմատի դասի առաջնային նպատակ:

ԳԼՈՒԽ 2

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՄԱՍ

Commented [U10]: չկա տեղեկություն ով ինչպես երբ ում հետ, մեթոդը պարզ չէ, խումբը, քանի հոգի և այլն

«Սովորողների ինքնուրույնությունը նախաձեռնությունը և ստեղծագործական ունակությունների զարգացումը առարկայի դասավանդման ընթացքում>> թեմայով հետազոտության շրջանակներում իրականացվող հարցախույզի նպատակն էր պարզել, թե որքանո՞վ է իրականացվում կրտսեր դպրոցականների ինքնակրթությունը դասավանդվող առարկաների մասնավորապես՝ շախմատ առարկայի միջոցով:

1.**Ինքնակրթության հմտությունների ձևավորումը տարրական դպրոցում անհրաժեշտ է, թե՞ ոչ:**



Գծապատկեր 1.Ուսուցիչների 60%-ը գտնում է, որ ինքնուրույն հանձնարարություններն անհրաժեշտ են, քանի որ սովորելու հմտությունը սկսում է ձևավորվել կրտսեր դպրոցականների մոտ, երբ հանձնարարությունների միջոցով, նրանք պարբերաբար կատարում են օրինակում բերված գործողությունները ծնողների և ընտանիքի ավագ անդամների վերահսկողությամբ: Ուսուցիչների 40%-ը գտնում է,որ դրա կարիքը չկա, և պետք չէ երեխային ծանրաբեռնել: Որպես գործող ուսուցիչ ինձ անհանգստացրեց ուսուցիչների 40%-ի կարծիքը, որունք գտնում են, որ տնային հանձնարարությունների կարիք չկա; Մենք գտնում ենք, որ ինքնուրույն հանձնարարություններ տալը անհրաժեշտ է, միայն չպետք է ծանրաբեռնել երեխաներին՝ հաշվի առնելով տարիքային առանձնահատկությունները:

2. Կրտսեր դպրոցականները հեշտությա՞մբ են հաղթահարում ինքնուրույն աշխատանքի միջոցով իրականացվող առաջադրանքները:



Գծապատկեր 2. Հարցմանը մասնակից 61%-ը նշել են, որ իրենց աշակերտները հեշտությամբ են կատարում ինքնուրույն աշխատանքները, նույնիսկ սիրով ու ոգևորությամբ, քանի որ դրանից հետո արժանանում են խրախուսման: 28%-ը նշել են, որ աշակերտները դժվարությամբ են կատարում ինքնուրույն աշխատանքներ,անընդհատ ուղորդելու կարիք ունեն: 11%-ը չեն կարողանում ընդհանրապես ինքնուրույն աշխատանք կատարել, չգիտեն գրելու տեխնիկան: Արդյունքներից երևում է, որ կրտսեր դպրոցականները հաճույքով և հեշտությամբ են կատարում ինքնուրույն առաջադրանքներ:

3.Ո՞ր առարկայից եք առավել շատ ինքնակրթությանը նպաստող առաջադրանքներ հանձնարարում:



Գծապատկեր 3.Վերոհիշյալ հարցին ուսուցիչները պատասխանել են հետևյալ կերպ. նրանց 42%-ը նշել են, որ մաթեմատիկա առարկան և մաթեմատիկական առաջադրանքները նպաստում են կրտսեր դպրոցականի ինքնակրթության զարգացմանը, լուծելով մաթեմատիկան առաջադրանքներ կրտսեր դպրոցականը հաղթահարում է դժվարություններ և ինքնուրույն հասնում վերջնակետին: 39%-ը նշել են

շախմատ առարկան.նրանք ինքնուրույն խաղալով, քայլերը հաղթահարելով ինքնակրթվում են և նրանց մոտ որոշակի ինքնուրույն որակներ է ձևավորվում: Ուսուցիչների 19%-ը նշել է, որ իրենց աշակերտների ինքնակրթության նպաստում են այլ առարկաներ՝ <<տեխնոլոգիա>>, <<ես և շրջակա>>, <<ինքնուրույն ընթերցանություն>>:

4.Ինչպիսի՞ հանձնարարություններն են նպաստում սովորողների ինքնուրույնության ձևավորմանը:



Գծապատկեր 4. Ուսուցիչները վերոհիշյալ հարցին պատասխանեցին հետևյալ կերպ. նախագծային աշխատանք 30%, հետազոտական աշխատանք 25%, գործնական աշխատանք 25%, թեմատիկ աշխատանք13%, այլ տիպի հանձնարարություններ: Որպեսզի կրտսեր դպրոցականները կարողանան ինքնուրույն մտավոր աշխատանք կատարել, անհրաժեշտ է, որ սկզբնական փուլում դրանք իրագործվեն ուսուցչի ղեկավարության պայմաններում, իսկ հաջորդ փուլերում՝ ինքնուրույն նախաձեռնությամբ:

Այստեղից կարող ենք եզրակացնել, որ կրտսեր դպրոցականի մոտ ավելի զարգացած է նախագծային աշխատանքը, որն էլ նպաստում է նրա ինքնուրույն աշխատանքի ձևավորմանը: Կարևորը կայանում է նրանում, որ սկզբնական փուլը ուղղորդվի դասվարի կողմից դասարանում, որն էլ կօգնի հետագայում երեխայի ինքնուրույն նախաձեռնության ինքնուրույն հանձնարարությունների մյուս ձևերի կատարմանը:

5.Ինչպիսի՞ որակներ են ձևավորում ինքնակրթության ճանապարհով:



Գծապատկեր 5. Դասվարների 40%-ը գտնում է, որ ինքնակրթության միջոցով զարգանում է կրտսեր

Commented [U11]: սրանք իհարկե կապված են, բայց ամեն դեպքում տարբեր են՝ ինքնակրթությունն ու ինքնուրույնությունը

դպրոցականների ինքնուրույն մտածողությունը:

Նրանք սկսում են ինքնուրույն կատարել իրենց առաջադրված խնդիրները իսկ 24%-ը գտնում է, որ կատարելով ինքնուրույն հանձնարարությունները կրտսեր դպրոցականների մոտ ձևավորվում է հաստատակամություն:Ուսուցիչների 22%-ի կարծիքով՝ ինքնուրույն հանձնարարությունները կրտսեր դպրոցականների մոտ ձևավորում են կամքի ուժ, նպատակլաց կերպով հաղթահարում է այդ դժվարությունները, իսկ 14%-ը գտնում է, որ ինքնուրույն հանձնարարությունները կրտսեր դպրոցականի մոտ ձևավորում և զարգացնում են աշխատասիրություն

Այսպիսով՝ միայն սեփական գործունեության արդյունքում է երեխան իր համար բացահայտում հնարավոր բոլոր տարբերակները: Ուսուցիչների կողմից տրված հարցի պատասխանը մեզ գոհացնում է, քանի որ նրանք նշել էին, որ ինքնուրույն հանձնարարությունները աշակերտների մոտ ձևավորում է ինքնուրույն որակներ

6.Ինչ փոփոխություններ կառաջարկեք տարրական դպրոցում ինքնակրթության հիմնախնդրի լուծման ուղղությամբ:



Գծապատկեր 6. Այս հարցին, թե ինչ փոփոխություններ կառաջարկեն տարրական դպրոցում ինքնակրթության դերը կարևորելու ուղղությամբ դասվարների 60%-ը նշել է, որ կարելի է, ինքնուրույն հանձնարարվող առաջադրանքների քանակը ավելացնել: Իսկ ուսուցիչների 30%-ը նշել են, որ կարելի դասագրքերի փոփոխություն անել, ավելի շատ գործնական նյութեր ընդգրկել, որպեզի ինքնակրթության և ինքնուրույնության գործընթացը ձևավորվի: 10%-ը գտնում են, որ պետք է կիրառեն խրախուսման մեթոդներ: Այսպիսով տվյալների պատկերից երևում է, որ ուսուցիչները միակարծիք չեն այս հարցի շուրջ:

7.Ինչպիսի՞ հանձնարարություններն են նպաստում սովորողների ինքնուրույնության ձևավորմանը:



Գծապատկեր 7. Դասվարները վերոհիշյալ հարցին պատասխանեցին հետևյալ կերպ. նախագծային աշխատանք 30%, հետազոտական աշխատանք 25%, գործնական աշխատանք 25%, թեմատիկ աշխատանք13%, այլ տիպի հանձնարարություններ: Որպեսզի կրտսեր դպրոցականները կարողանան ինքնուրույն մտավոր աշխատանք կատարել, անհրաժեշտ է, որ սկզբնական փուլում դրանք իրագործվեն դասվարի ղեկավարության պայմաններում, իսկ հաջորդ փուլերում՝ ինքնուրույն նախաձեռնությամբ:

Այստեղից կարող ենք եզրակացնել, որ կրտսեր դպրոցականի մոտ ավելի զարգացած է նախագծային աշխատանքը, որն էլ նպաստում է նրա ինքնուրույն աշխատանքի ձևավորմանը: Կարևորը կայանում է նրանում, որ սկզբնական փուլը ուղղորդվի ուսուցչի կողմից դասարանում, որն էլ կօգնի հետագայում երեխայի ինքնուրույն նախաձեռնության ինքնուրույն հանձնարարությունների մյուս ձևերի կատարմանը:

8.Հնարավո՞ր է հանձնարարությունների միջոցով ձևավորել կրտսեր դպրոցականի ինքնուրույնությունը:



Գծապատկեր 8. Ուսուցիչների 55%-ը գտնում է, որ հնարավոր չէ կրտսեր դպրոցականների մոտ առանց հանձնարարությունների ձևավորել ինքնուրույնություն, քանի որ ինքնուրույն հանձնարարությունը աշակերտների մոտ ձևավորում է ինքնակրթության, մեր պրակտիկ փորձը ցույց է տալիս, աշակերտները ինքնուրույն հանձնարաությունները կատարելիս խորանում է ուսումնական նյութի ուսումնասիրման մեջ, փնտրում է տեղեկատվության լրացուցիչ աղբյուրներ, որպեսզի բնական կերպով կատարի առաջադրանքը, երբեմն նույնիսկ ընդլայնում է պարտադիր առաջադրանքի սահմանները: Ուսուցիչների 30% -ի կարծիքով, որ եթե ուսուցիչ դասարանում արդյունավետ աշխատի, ապա ինքնուրույն հանձնարարության կարիք չի լինի, իսկ ուսուցիչների 15%-ը գտնում է, որ մասամբ կձևավորի ինքնուրույնություն: Մեզ ուրախացնում է այն կարծիքը, որ դասվարների մեծամասնությունը կողմ են ինքնուրույն հանձնարարությունների կատարմանը, որը կնպաստի կրտսեր դպրոցականի ինքնուրույն աշխատանք կատարելուն և ինքնուրույնության ձևավորմանը: մեզ անհանգստացրեց այն միտքը, որ կան դասվարներ, որոնք դեռևս լիարժեք չեն գիտակցում հանձնարարության դերի և նշանակության մասին և մոռանում են, որ ոչ բոլոր դասվարներն են արդյաունավետ օգտագործում դասաժամը, որպեսզի երեխան աշխատանք չկատարի տանը:

9.Ի՞նչպիսի գործնական կարողություններ են ձևավորում ինքնակրթության ճանապարհով :



Գծապատկեր9. Ուսուցիչների 25%-ը գտնում է, որ ինքնուրույն հանձնարարությունները զարգացնում են ինքնուրույն գործելու կարողությունը, 23%-ը, որոնողական, 23%-ը, ստեղծագործական կարողություն 17%, մտավոր՝ 21%-ը, այլ 4%: Այսպիսով այս գծապատկերի պատասխաններից երևում է, որ բոլոր դասվարներն էլ համամիտ են, որ ինքնուրույն հանձնարարությունների կատարումը ձևավորում է որոշակի գործնական կարողություններ, որոնք նպաստում են ուսուցման արդյունավետությանը և կօգնեն հետագայում նրանց բարձր դասարաններում հաղթահարել դժվարություններ:

10.Ինչպիսի՞ հանձնարարարություններ եք տալիս կրտսեր դպրոցականների ինքնակրթության նպատակով:



Գծապատկեր 10. Հարցին, թե ինչպիսի հանձնարարություններ եք հանձնարարում կրտսեր դպրոցականներին, ինքնակրթության նպատակով: Ուսուցիչները տվել են հետևյալ պատասխանները. նրանց 58%-ը գտնում է, որ հետազոտական աշխատանքը կրտսեր դպրոցականներին հնարավորություն է տալիս դասավանդվող տարբեր առարկաներից նյութերի ուսումնասիրության ժամանակ ինքնուրույն ձեռք բերել գիտելիքներ, անել համապատասխան վերլուծություններ, ինչը նպաստում է կրտսեր դպրոցականների հետագա ինքնորոշմանը՝ ապահովելով տարբեր գիտությունների, դպրոցական առարկաների և ընդհանրապես ճանաչողության գործընթացների նկատմամբ հետաքրքրության զարգացման հնարավորություններ: Իսկ ուսուցիչների 42%-ը նշել են նախագծային աշխատանք և հիմնավորել, որ այս աշխատանքի առաջնային նպատակն է խթանել սովորողների ինքնազարգացումը՝ նոր փորձ ձեռք բերելու, գիտելիքները կիրառելու համար: Ընդգրկվելով ուսումնական նախագծերում՝ աշակերտները սովորում են կատարել հետազոտություններ, հավաքել տարաբնույթ տեղեկատվություն, կողմնորոշվել տեղեկատվության մեջ, ընտրել անհրաժեշտ նյութերը, տարանջատել գլխավորն ու երկրորդականը, համակարգված և հստակ ձևակերպել իրենց մտքերը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հիմք ընդունելով մանկավարժահոգեբանական գրականության ուսումնասիրության և մեր կատարած հետազոտական աշխատանքների արդյունքները՝ կարելի է եզրակացնել.

- Ժամանակակից մանկավարժության հիմնախնդիրների շարքում իր կարևոր տեղն ունի դպրոցականների ինքնակրթության հիմնահարցը, որն այսօր դիտարկվում է որպես հասարակական պահանջ և կրթության արդի խնդիր:
- Կրտսեր դպրոցականների տարիքային առանձնահատկություններից ելնելով, տարրական դպրոցի մանկավարժական գործընթացում շահմատ առարկայի միջոցով ինքնակրթությանը միտված առաջադրանքներն ունեն կարևոր նշանակություն, քանի որ նպաստում են աշակերտների որոնողական կարողությունների ձևավորմանը, կազմակերպվածությանը, ուսումնական ակտիվությանն ու հետաքրքրվածությանը դասի նկատմամբ՝ կրտսեր դպրոցական տարիքից ձևավորելով դրական վերաբերմունք ողջ կյանքում սովորելու կարևորության ու անհրաժեշտության նկատմամբ:
- Մեր կողմից իրականացված հետազոտական աշխատանքների ընթացքում պարզ դարձավ, որ ուսուցիչների մեծ մասը թեև կարևորում է տարրական դպրոցում ինքնակրթության դերը, բայց կրտսեր դպրոցականների ինքնակրթությանը միտված առաջադրանքներ հավասարաչափ չի հանձնարարում բոլոր առարկաներից, իսկ կրտսեր դպրոցականների մեծ մասը տրված առաջադրանքները կատարելու համար հաճախ դիմում է ծնողների օգնությանը՝ որպես տեղեկատվության աղբյուր առավելապես օգտագործելով համացանցը:

Commented [U12]: միակ խելքին մի քիչ մոտ գաղափարն է

- Տարրական դպրոցում կրտսեր դպրոցականների ինքնակրթության կազմակերպման մանկավարժական արդյունավետ ուղիներն են՝

✓ տարրական դպրոցի դասագրքերում ինքնուրույն աշխատանքներին միտված հանձնարարությունների քանակի ավելացում,

✓ շարունակական բնույթ կրող հանձնարարություններ ու առաջադրանքներ՝ բովանդակության և իրականացման աստիճանական բարդության ապահովմամբ,

Օգտագործված գրականության ցանկ

1. Դալլաքյան Ա.Հ., Տարրական դպրոցի ուսուցչի մասնագիտական զարգացման հիմունքներ: Ուսումնամեթոդական ձեռնարկ, ՎՄՎ-Պրինտ, 2021. – 248 էջ:

2. Միքայելյան Մ. Շախմատի դասավանդման ներգործությունը հոգեկան որակների ձևավորման վրա, «Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ» Գիտական կոնսորցիումի հանդես, Եր., 2015/1, էջ 125 - 138:

3. Շախմատային կրթության արդի վիճակը և զարգացման միտումները: Միջազգային գիտաժողովի նյութեր, Ծաղկաձոր, 2019.-Եր.: Քոփի Փրինթ, 2019. - 144 էջ:

4. Պետրոսյան Ռ., Խաչատրյան Ա., Սարգսյան Ա., Կրտսեր դպրոցականի ուշադրության կենտրոնացվածության դժվարությունները և հաղթահարման հնարավորությունները «Շախմատ» ուսումնական առարկայի դասավանդման գործընթացում: Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ «Գիտական տեղեկագիր» N 2-3 (21-22) Երևան, 2014, էջ 132 - 140:

5. Տարրական դպրոցի «Շախմատ» առարկայի չափորոշիչ (2-4 դասարաններ), Երևան 2012, 26 էջ:

6. Анишева В.Е. Методические особенности индивидуализированного начального обучения шахматам детей младшего школьного возраста: / Анишева Варвара Евгеньевна; РГАФК. - М., 2002. - 163 с.:

7. Асмолов А.Г. Психология личности: культурно-историческое понимание развития человека. 3-е изд., испр. и доп. – М.: Смысл; ИЦ «Академия», 2007. - 269 с.

8. Блох М.В. Учебник шахмат: для общеобразовательных и спортивных школ, шахматных коллективов внешкольных учреждений и самообразования / М.В. Блох. – М.: Ассоциация учителей физики, 1997. – 148 с.

9. Белицкая Г.Э. Социальная компетентность личности. – М.: ИП РАН,1995. – 245 с.

10. Герасимова А.В. Глоссарий ФГОС начального общего образования / А.В. Герасимова // Управление начальной школой. – 2011. – № 1. – С. 10.

11. Гершунский Б.С., Костьев А.Н. Шахматы – школе / Б.С.Гершунский, А.Н.Костьев; Под ред. Б.С. Гершунского, Н.В. Крогиуса, В.С. Хелемендика. – М.: Педагогика, 1991. – 336 с.